

ԲԱՐԴ ԱՍՈՒՅՔՆԵՐԻ ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ԻՄԱՍՏՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ
ՇՈՒՐՋ

(պայմանական ասույթների նյութի հիման վրա)

Լ. Գ. ԲՐՈՒՏՅԱՆ

Պայմանական ասույթների գործարանական (պրագմատիկ) իմաստները առ այսօր գրեթե ուսումնասիրված չեն: Մինչդեռ դրանց ուսումնասիրությունն անհրաժեշտությունն ու կարևորությունը պայմանավորված է պայմանական ասույթների՝ ասույթների այդ շահագրգռող հետաքրքիր և յուրահատուկ տեսակի առավել ճշգրիտ ընկալումով:

Այդ կապակցությամբ պետք է նշել հետևյալը: Այժմ կասկած չի հարուցում այն փաստը, որ ցանկացած տեքստ ճշգրիտ, ամենայն խորությամբ ըմբռնելու համար պետք է հաշվի առնել նրա միայն նրա արտակա իմաստները, այլև, որ պակաս կարևոր չէ, ներակա, խորքային, ոչ-բացահայտ իմաստները: Այդ փաստի ընդունմանն ու, որպես հետևանք, տեքստերի (ասույթների) ներակա իմաստների վերհանմանն ու ուսումնասիրությանն են հանգել վերջին մի քանի տասնամյակներում թե՛ մեր և թե՛ արտասահմանցի շատ-շատ լեզվաբաններ: Ե. Վ. Պադուչևան, օրինակ, գրում է, որ յուրաքանչյուր տեքստ բովանդակում է ոչ միայն արտակա, այլև ներակա ձևով արտահայտված տեղեկություն, որը, այդուհանդերձ, նկատի է առնվում խոսողի և ընկալվում է լսողի կողմից¹: Տ. Մ. Նիկոլևան մասնիկների (իր եզրաբանությամբ՝ «եննգ խոսքի մասերի») գործառնության ուսումնասիրման կապակցությամբ օգտագործում է այնպիսի հասկացություններ, ինչպես «Թաքնված իմաստ», «լրացուցիչ թաքնված իմաստի աշխարհ», «ստվերային ասույթ»²: Հատկանշական է նրա աշխատության ենթավերնագրերից մեկը. «Քանի՞ իմաստային աշխարհ են արտացոլում մասնիկները»³: Նկատենք, ի դեպ, որ որոշ լեզուներում (գերմաներեն, հոլանդերեն, հունարեն և այլն) մասնիկները խոսողի խորքային «նպատակագրում» արտահայտելու կարևոր միջոց են⁴: Վ. Ա. Ջվեգինցի խոսքերով՝ «լեզուն իր կիրառման նպատակին հասնում է միայն այն դեպքում, երբ հասկացվում է, իսկ լեզվական հասկացողությունը կարող է կայանալ միայն այնքանով, որքանով համակարգը, որով այն իրականացվում է, մարմնավորում է նաև այն ամենը, ինչ գտնվում է բնական լեզվի «բացահայտ» ձևերի սահմաններից դուրս»⁵: Յ. Հինթիկան նշում է, որ «Թաքնված իմաստը» չի կարող հետազոտվել լեզվից դուրս⁶: Նշվում է, որ «անհար է պատկերացնել այնպիսի տեքստ, որում հեղինակի հաղորդակցման մտադրությունը միատեսակ լրիվությամբ արտահայտված լինի դրա բոլոր մասերում: Ընթերցողին հասցեագրված տեղեկությունների մեծ մասը, անշուշտ, արտահայտված է համապատասխան լեզվական կառույցներում, սակայն, տեղեկությունների որոշ մասը մնում է ներակա: Ընթերցելիս այն պետք է վերականգնվի տեքստի խորքային (միջուկային) կառուցվածքը քննելու ճանապարհով»⁷: Ի Վ. Առնոլդը ներակայումը

¹ Տե՛ս Ե. Վ. Падучева, Высказывание и его соотносительность с действительностью (Референциальные аспекты семантики местоимений), М., 1985, с. 61:

² Տե՛ս Т. М. Николаева, Функции частиц в высказывании (на материале славянских языков), М., 1985, с. 80:

³ Նույն տեղը, էջ 28:

⁴ Տե՛ս Т. ван Дейк, Вопросы прагматики текста, «Новое в зарубежной лингвистике», 1978, вып. 8, с. 331:

⁵ В. А. Звегинцев, Язык как фактор компьютерной революции, «Научно-техническая революция», 1985, сер. 2, № 9, с. 5.

⁶ Տե՛ս J. Hintikka, Frege's Hidden Semantics, Rev. intern. philosophie. 1979, N 30.

⁷ А. А. Вежле, Обучение пониманию глубинного смысла с имплицитной структурой, «Проблемы текстуральной лингвистики», Киев, 1983, с. 126.

սահմանում է որպես «լրացուցիչ ենթադրվող իմաստ»⁸: ներակայության (արտակայության) հիմնահարցին են նվիրված շատ այլ աշխատանքներ: Այս ուղղությամբ կատարված աշխատանքների բազմազանության մասին է վկայում այն փաստը, որ «թաքնված քերականությունն» անփոփոխակալին հասկացությունը անվանվում է այնպիսի փոփոխակալին տարրեր եզրերով, ինչպիսիք են «լրացուցիչ թաքնված իմաստ», «սովորային ասույթ» և «լրացուցիչ իմաստային սոդեր»⁹, «բովանդակալին-ենթատեքստային տեղեկություն» և «հաղորդման երկուղղվածություն»¹⁰, «երկտեքստ» և «թաքնված երկձայնություն»¹¹:

Ներակա տարրերի հայտնաբերման կարևորության մասին խոսելիս, անհրաժեշտ է ընդգծել, որ տեքստի ընկալումը նույնական է միայն այն դեպքում, երբ հաշվի են առնվում ինչպես ներակա, այնպես էլ արտակա տարրերը՝ ոչ առաջիններին, ոչ երկրորդներին առավել կարևորություն չտալով: Նախապատվությունը տարրերի այս կամ այն խմբին տալը հանգեցնում է անցանկալի հետևանքների: Առաջնությունը թաքնված կարգերին տալը, ըստ Ա. Վեժբիցայի, «ամենատարիմաստ արդյունքն է՝ թաքնված լեզվաբանական կարգերի սկզբունքորեն հետաքրքիր որոնումներում»¹²: Միանգամայն ակնհայտ է, որ տեքստը մեկնելիս, ներակա և արտակա տարրերը, ի վերջո, պետք է հաշվի առնել համալիր ձևով:

Ներակա իմաստների մասին խոսելիս, շափազանց կարևոր է, մեր կարծիքով, տարրերակել ներակայության երկու տարրեր տեղակներ. մի կողմից, կարգային իմաստներ, այսինքն, իմաստներ՝ կապված պրոպոզիցիա արտահայտելու հետ և մյուս կողմից, իմաստներ՝ կապված այդ փաստերը սուբյեկտիվորեն գնահատելու, որակելու հետ, այլ կերպ ասած՝ գործարանական իմաստներ:

Սույն հոդվածի նպատակն էլ հենց այդ վերջին տեսակի ներակա իմաստների վերհանումն ու վերլուծությունն է պայմանական ասույթներում. Համեմատենք այդ առնչությամբ Մ. Վ. Լյայպոնի հետևյալ խոսքերը. «Բարդ նախադասության իմաստարանական կառուցվածքը ձևավորվում է որպես երկու «մրցակցող» հիմքերի փոխներգործություն. մի կողմից, շեղորտեղեկատվական հիմքի (օբյեկտիվացված բովանդակության) և, մյուս կողմից, սուբյեկտիվ հայեցակարգային (անդրադարձող) գործոնի: Գրանց սահմանազատման գործընթացը բազմաստիճան և բազմակողմանի է: Հարաբերության (և համապատասխանաբար շաղկապի կամ վերջինիս համակերպի որպես այս հարաբերության նշանի և որակչի) իմաստային ներունակությունը ենթակա է միաշափ տարրերակման: Այդ ներունակությունը բնութագրվում է, նախ, որոշակի, խորությամբ, երկրորդ՝ այն կարիք ունի բազմակողմանի բնութագրման, այն է՝ կարող է մեկնաբանվել և՛ տրամաբանական-իմաստարանական մակարդակով, և՛ իրական հաղորդակցական արժեքավորության տեսանկյունից»¹³: Իր մեկ այլ աշխատանքում Մ. Վ. Լյայպոնը, խոսելով տարրական կառուցվածք ունեցող շաղկապների նույնական, բավարար մեկնաբանման, այս հարցի առնչությամբ ծագած սուր բանավեճերի մասին, միանգամայն, ըստ մեզ, արդարացիորեն շաղկապները դիտարկում է և՛ որպես տրամաբանական բառեր, և՛ որպես գործարանական բառեր: «Այդպիսի միավորների մեկնաբանման բարդությունները պայմանավորված են այն փաստով, որ դրանցից յուրաքանչյուրը կրում է որևէ տրամաբանական գաղափար, այսինքն տրամաբանական լրատվ. և, միաժամանակ, հանդես է գալիս որպես հաղորդող տեղեկության գործարանական հարմարման միջոց, այսինքն՝ գործարանական բառ է: Վերաբերական միավորի իմաստի գումարելիներ միաժամանակ դառնում են այնպիսի բաղադրիչներ, ինչպիսիք են խոսողի դիտավորությունը և հասցեատիրոջ գործոնը: Այդ միավորների իմաստային կառուցվածքը ներկայանում է որպես գնահատման շարքի ստորակարգություն, որը ներառում է (1) տեքստի հատվածների միջև հարաբերության որակավորումը, (2) հաստատվող կապի բնույթի վերաբերյալ հասցեատիրոջ տեսակետի կանխառեխումը, (3) հասցեատիրոջ կարծիքի հարաբերակցումը խոսողի առաջարկած վարկածին: Գործա-

⁸ Տե՛ս **И. В. Арнольд**, Импликация как прием построения текста и предмет филологического изучения, «Вопросы языкознания», 1982, № 4, с. 34:

⁹ Տե՛ս **Т. М. Николаева**, *Նշվ. աշխ.*, էջեր 29, 125:

¹⁰ Տե՛ս **И. Р. Гальперин**, Текст как объект лингвистического исследования. М., 1981, с. 40:

¹¹ Տե՛ս **А. Вежбицка**, Метатекст в тексте, «Новое в зарубежной лингвистике», 1978, вып. 8, с. 404:

¹² **А. Вежбицка**, Дело о поверхностном падеже, «Новое в зарубежной лингвистике», 1981, вып. 10, с. 308.

¹³ **М. В. Ляпон**, Структура отношения и ситуативные условия его реализации в сложном предложении, «Русский язык. Текст как целое и компоненты текста», М., 1982, с. 75.

բանական տեղեկությունը «միախառնվում է» վերաբերական միավորի իմաստային կառուցվածքին կամ միանում է նրան որպես գործարանական ճշտում»¹⁴:

Պայմանական ասույթների գործարանական իմաստները կարելի է, իրենց հերթին, երկու խմբերի բաժանել. ա) եղանակավորող (մոդել) իմաստների վրա հիմնված և բ) այլ կարգի իմաստների: Նկատենք ամենակարգից, որ այդ բաժանումը փոքր-ինչ պայմանական է, քանի որ երկրորդ խմբին պատկանող գործարանական իմաստներն անհրաժեշտությամբ ներառում են առաջինները: Եվ, ընդհանրապես, հազիվ թե կարելի լինի խոսել «մաքուր» գործարանական իմաստների մասին:

Այժմ ավելի հանգամանորեն կանգ առնենք պայմանական ասույթների վերը նշված գործարանական իմաստների երկու տեսակի վրա:

Հայտնի է, որ պայմանական ասույթների կարևորագույն հատկանիշներից է դրանց եղանակավորությունը: Այդ երևույթը լավ ուսումնասիրված է տարբեր լեզուներում: Այդ տեսանկյունից դրանք բաժանվում են երկու մեծ խմբերի. 1) իրական պայմանի նախադասություններ (conditio realis) և 2) անիրական պայմանի նախադասություններ: Վերջիններս կրենց հերթին կազմված են՝ 1) հնարավոր պայմանի նախադասություններից (conditio potentialis) և 2) ոչ-իրական պայմանի նախադասություններից (conditio irrealis): Այս դասակարգումն է ընկած տարբեր հեղինակների առաջարկած դասակարգումների հիմքում, թեև հարկ է նկատել, որ որոշ դեպքերում դրանք ներկայանում են փոքր-ինչ այլ տեսքով, մեծամասամբ՝ ավելի տարբերակված:

Վ. Գ. Առաքելյանը տարբերակում է հնարավոր իրական պայմանը և հնարավոր ցանկալի, ենթադրելի պայմանը¹⁵: Գ. Լ. Գաբրիելյանը¹⁶ հանգամանորեն նկարագրում է պայմանական եղանակավորության տեսակները հայոց լեզվի նյութի հիման վրա: Նա սահմանազատում է՝ 1) այնպիսի ենթադրություններ, որոնք կարող են իրականանալ, 2) այնպիսի ենթադրություններ, որոնք կարող են իրականանալ, բայց չեն իրականացել, 3) այնպիսի ենթադրություններ, որոնք անիրագործելի են իրականությունը հակադիր լինելու պատճառով: Նշվում է նաև, որ պայմանի այս երեք տեսակներին համապատասխանում են հետևանքի երեք տարբեր տեսակներ, որոնք, սակայն, ընդհանուր առմամբ, ներկայացվում են որպես իրագործելի և ոչ-իրագործելի: Պայմանական նախադասությունների դասակարգումը եղանակավորության տեսանկյունից, ընդհանուր գծերով, կրկնվում է անգլերենում և ռուսերենում¹⁷:

Ավանդական քերականություններում ուսումնասիրվող պայմանական ասույթների եղանակավորությունը կարելի է, մեր կարծիքով, դիտարկել որպես այդ ասույթների գործարանությունը, քանի որ այդ դեպքում մենք գործ ունենք արտահայտված փաստի վերաբերյալ խոսողի վերաբերմունքի հետ՝ այն իրական կամ ոչ-իրական լինելու տեսակետից: Համեմատենք Ն. Ա. Կաջուկայի¹⁸ կարծիքը այն մասին, որ realis և irrealis ներկայացնում են իրագրության խոսողի սուբյեկտիվ գնահատականը: Սրան արծազանքում են Ա. Ն. Գորյայի խոսքերն այն մասին, որ պայմանական նախադասությունների դասակարգման ժամանակ ուղադրության է առնելվում գործարանական գործոնը, այն է՝ պայմանի իրական կամ ոչ-իրական լինելը խոսողի տեսանկյունից¹⁹: Ս. Գ. Իլյենկոն²⁰ եղանակավորությունը պայմանական նախադասություններում դիտարկում է որպես սուբյեկտիվ-օբյեկտիվ կարգ, որը ներառում է ոչ միայն խոսողի վերա-

¹⁴ М. В. Япон. Единицы реляционной семантики: прагматические аспекты толкования. «Сочетание лингвистической и внелингвистической информации в автоматическом словаре: Материалы Всесоюзной школы-семинара», Ереван, 1987, с. 26—28.

¹⁵ Տե՛ս Վ. Գ. Առաքելյան, Հայերենի շարահյուսություն, Երևան, հատ. II, 1964, էջ 218:

¹⁶ Տե՛ս Գ. Լ. Գաբրիելյան, Շաղկապները ժամանակակից հայերենում, Երևան, 1963, էջ 271—272:

¹⁷ Տե՛ս E. Gordon, J. Krylova, A Grammar of Present-Day English. Moscow, 1974, p. 121, Грамматика современного русского литературного языка. М., 1970, с. 715:

¹⁸ Տե՛ս N. Akatsuka, Conditionals and the Epistemic Scale, «Language», 1985, vol. 61, N 3, p. 625.

¹⁹ Տե՛ս А. Н. Горя, Импликация ирреальности в простом предложении (на материале английского языка), «Теоретические и прикладные исследования по романским и германским языкам. Романо-германская филология», Кишинев, 1985, с. 108:

²⁰ Տե՛ս С. Г. Ильенко, Сложноподчиненные предложения с придаточными, присоединяемыми к главному союзом если, в современном русском языке, «Вопросы современного и исторического синтаксиса русского языка», 1961, т. 225, с. 31—32:

բերմունքը իրականությանը, այլև հասցեատիրոջ վերաբերմունքը այդ իրականությանը՝ խոսողի տեսակետից:

Ճճարված պայմանի ասույթներում գործարանական գործոնը (խոսողի վերաբերմունքը) արտահայտվում է նրանում, որ նա չգիտի, արդյո՞ք իրավիճակը իրական է, թե՛ ոչ: Զարտահայտված այլընտրական տարրերակ հավասարազոր է տվյալին իրականությանը համապատասխանելու տեսանկյունից: Օրինակ. «Թե՛ն նա առողջացել է, ապա կգնա աշխատանքի» = «Թե՛ն նա չի առողջացել, ապա չի գնա աշխատանքի»: Խոսողը հավատում է, որ երկու տարրերակն էլ հնարավոր են, սակայն նա չգիտի, թե որն է իրականը: Ավելացնենք նաև, որ նշված տեսակի ասույթների ստորադասական մասով կարող է արտահայտվել հնարավոր իրավիճակ (իրականալի կամ ոչ-իրականալի խոսողի տեսանկյունից) ոչ միայն անցյալում, այլև ներկայում և ապագայում:

Այժմ դիտարկենք ոչ-իրական պայմանի ասույթների գործարանությունը: Ոչ-իրական պայմանի ասույթներում պարունակված է գործարանական իմաստն այն մասին, որ իրական աշխարհում պրոպոզիցիան կեղծ է: Ասելով «Թե՛ն P, ապա Q», խոսողը ի նկատի ունի միևնույն ժամանակ «Ոչ-P և ոչ-Q»: Այլ կերպ ասած, նման նախադասությունների թե՛ գլխավոր և թե՛ ստորադասական մասերով արտակա ձևով արտահայտված փաստերը ներակա ձևով (խորքային մակարդակում) ժխտվում են խոսողի կողմից:

Նշված տեսակի պայմանական ասույթները հանգամանորեն քննված են լեզվաբանական (ավելացնենք՝ նաև տրամաբանական) գրականության մեջ, և բնական է, որ հետազոտողների ուշադրությունից չէր կարող վրիպել դրանց թաքնված, միևնույն ժամանակ շահագանց կարևոր ներակա իմաստը, այն է՝ ժխտական նշանակությունը, շիրագործված կամ անիրագործելի պայմանի նշանակությունը: Այսպես, Մ. Վ. Լյապոնը²¹ ըզձական (ծն) մասնիկը գնահատում է որպես ժխտման նմանակ: Համահունչ դատողություններ կան նաև այլ հեղինակների աշխատանքներում: Մասնավորապես, Տ. Ա. Զնամենսկայան²² խոսում է ժխտման ներակա իմաստույթի մասին ի՛ (եթե) շղզկապով պայմանական նախադասությունների իմաստային կառուցվածքում՝ վկայակոչելով անգլերենի զանազան բառարանները, որոնք տալիս են ժխտման բառեր բովանդակող սահմանումներ: Վ. Զ. Պանֆիլովը, որակելով ստորադասական եղանակով դրված բայը, օգտագործում է «չիրագործված հնարավորություն» արտահայտությունը²³: Լ. Լ. Շվիրկովան²⁴ նշում է, որ ոչ-իրական եղանակավորություն նախադասությունները բնորոշելու համար որոշ իսպանագետներ, ավանդական եզրի կողքին («ոչ-իրական պայման»), գործածում են «ներակա ժխտման պայմանի նախադասություններ», «իդեալական կամ ներակա ժխտման» եզրերը: Վերլուծելով «Թե՛ն Բրուտոսը չհամոզեր Կեսարին գնալ սենատ, դավադրությունը կձախողվեր» նախադասությունը, Ծ. Վ. Պագուլան անում է հետևյալ եզրակացությունը. «Նախադասության իմաստը հասկացող մարդը... դրանից տեղեկություն է ստանում, որ Բրուտոսը Կեսարին համոզել է գնալ սենատ»²⁵:

Ներակա ժխտման նշանակությունը վերլուծվող տիպի նախադասություններում կարող է արտակայվել լայն համատեքստում: Օրինակ. «Հրշեջները սանձահարեցին կրակը, շթողներով, որ այն դուրս գա սրճարանի սահմաններից, սակայն, պատերի զարդանախշ սալիկները, կահույթը, բարի սարքավորումը մոտ 200 քառակուսի մետր տարածքի վրա . փաստորեն լրիվ այրվել էին: Հրդեհի առաջացման պատճառները դեռևս պարզվում են, սակայն արդեն այսօր պարզ է, որ ազետից կարելի էր խուսափել, եթե... Իսկ «եթե»-ները շատ են: Սրճարանը փակելուց առաջ հնչում չի կատարվել, էլեկտրական հոսանքը վահանակից չի անջատվել: Համբարային դահլիճում գիշերը կար հերթապահ պահակ, բայց, ինչպես պարզվեց, նա պատասխանատվություն չի կրում սրճարանի համար, քանի որ ենթակա է այլ գերատեսչության» (լրագրից): Այս օրինակում, ուր ստորադասական մասերը զեղչված են, սակայն կարող են հեշտություն վերականգնվել և կրում են հաստատական բնույթ, «Իսկ «եթե»-ները շատ են»

²¹ Տե՛ս Մ. В. Ляпон, Взаимодействие категорий отрицания и ирреальности в тексте, «Синтаксис текста», М., 1979, с. 206—207:

²² Տե՛ս Т. А. Знаменская, О семантике предложений, вводимых подчинительным условным союзом, «Семантическая интеграция в синтагматике: Сборник научных трудов», Рига, 1984, с. 75—78:

²³ Տե՛ս В. З. Панфилов, Взаимоотношение языка и мышления. М., 1971, с. 191:

²⁴ Տե՛ս Л. Л. Швыркова, Употребление форм сослагательного наклонения в предаточных условных предложениях 1-ого типа (на материале подсистемы законодательных документов испанского языка), «Актуальные вопросы изучения иностранных языков», М., 1978, с. 53—54:

²⁵ Е. В. Падучева, նշվ. աշխ., էջ 71:

բառակապակցությունը հետևում է տեքստի այն մասը, որը ներկայացված է ընդհանուր ժխտական բնույթի նախադասություններով, որոնք թվարկում են չկատարված պայմանները:

Ասվածի առնչությունը հարկ է հետևյալ ճշգրտումը կատարել, որն էական ենք համարում: «Թարքնված ժխտում» և նմանօրինակ եզրերով արտահայտված հասկացությունները, կապելով խոսողի (հասցեագրողի) և լսողի (հասցեատիրոջ) հասկացությունների հետ միայն, կարելի է ստանալ գնահատողական կամ գործարանական գործոնը: Օրինակ, «Եթե ես Անգլիայի թագուհին լինեի, ես կեղի Գիանային կպաշտպանեի» ասույթի գործարանական իմաստը կարելի է վերհանել՝ կատարելով հետևյալ վերլուծությունը: «Ես գիտեմ, որ ես Անգլիայի թագուհին չեմ (դա ի սկզբանե բացառվում է, դա անհնարին է) և համոզված եմ, որ բոլորը գիտեն, որ դա այդպես չէ, հնուհայտն կեղծ կլիներ իմ կողմից հաղորդված միտքն այն մասին, որ ես կեղի Գիանային կարող եմ պաշտպանել, որը հասցեատիրոջ քաջ գիտակցում է»: Այդ իմաստով «Ես Անգլիայի թագուհին չեմ, և ես կեղի Գիանային չեմ պաշտպանում (չեմ պաշտպանել)» վերլուծությունը չի կարելի լրիվ համարել:

Այժմ դիտարկենք երկրորդ խմբին պատկանող գործարանական իմաստները: Այստեղ կարելի է առանձնացնել (համատեքստով պայմանավորված) հետևյալ իմաստները. անհրաժեշտության, խորհրդի, մաղթանքի, նախատիքի, նախազգուշացման և այլն:

Այսպես, «A, թե չէ B» բանաձևով նշանակվող այսպես կոչված «հակադիր նշանակություն արտահայտող պայմանի պարզագույն նախադասություններում» հաղորդվում է հատուկ հակադրության նշանակություն՝ պայմանականության երանգով, այն է՝ ցույց են տրվում չկատարման հնարավոր հետևանքներն այն բանի, ինչի մասին խոսվում է նախորդ ասույթներում²⁶:

Նախադաս նախադասությունը, որը հաճախ դրված է լինում հրամայական եղանակի ձևով, որպես կանոն, խոսողը արտահայտում է պարտադրականության, անհրաժեշտության եղանակավորություն: Որպես օրինակ բերենք հետևյալ ասույթը. «Լավ սովորիր, թե չէ ինստիտուտ չես ընդունվի» → «Լավ սովորիր (դու պետք է լավ սովորես, ես քեզ հրամայում եմ լավ սովորել և այլն), որովհետև եթե լավ չսովորես, ինստիտուտ չես ընդունվի»:

Հետաքրքրական են «Ոչ P և Q» բանաձևով արտահայտված ասույթները: Ժխտական մասնիկի իմաստը նման կառուցվածքներում հանգում է համակցիչների փոխբացատման նշանակության արտահայտմանը. նրանցից մեկի առկայությունը բացառում է մյուսի՝ առկայությունը, ինչը կարելի է փոխադրել հետևյալ բանաձևերի մեջ. «Եթե P, ապա ոչ Q», «Եթե ոչ P, ապա Q»: Այս առնչությամբ վերլուծենք «You can't fish and not eat» (E. Hemingway, «The Old Man and the Sea») նախադասությունը: Բառացի թարգմանությունը հետևյալն է. «Չի կարելի ձուկ որսալ և չուտել»: Եթե փոխակերպենք այն խորքային մակարդակի նախադասություն «Եթե P, ապա Q» բանաձևով, կստանանք. «Եթե ձուկ ես որսում, ապա չի կարելի չուտել այն (ապա պետք է ուտել այն)»: Վերլուծված դեպքում և շաղկապը պայմանական իմաստի հետ մեկտեղ արտահայտում է նաև հրամանի, խորհրդի, ցանկության ներակա, ներխոսողական գործառնություն:

Տարանջատման ձևական ցուցիչ հանդիսացող կամ շաղկապը (or, either... or, ИЛИ, ЛИБО) փոխբացատող բառապաշար բովանդակող համատեքստերում արտահայտում է պայմանական նշանակություն: Այլ խոսքերով՝ նշված համատեքստերում կամ շաղկապով ասույթների խորքային իմաստն արտահայտվում է դրանք եթե շաղկապով ասույթների փոխակերպման ճանապարհով: Ընդ որում, եթե նախադասության առաջին մասը հաստատական է, եթե շաղկապն օգտագործվում է ժխտական մասնիկով, և հակառակը՝ բացասական առաջին բաղադրիչի դեպքում եթե-ն գործածվում է առանց ժխտական մասնիկի²⁷: Այդպիսի կառուցվածքների առաջին մասում հաճախ արտահայտված է պարտադրականության, անհրաժեշտության նշանակություն. «Կամ դու կընդունվես ինստիտուտ, կամ ես կմեռնեմ» ասույթը իմաստով նույնական է «Եթե դու ինստիտուտ չընդունվես (իսկ դու պետք է այդ անես), ապա ես կմեռնեմ» ասույթին, որտեղ «դու պետք է այդ անես» մասը ասույթի գործարանական իմաստն է:

Մ. Վ. Լյապչենը, խոսելով խիստ տարանջատման համապատասխանող (ИЛИ, ЛИБО) շաղկապի «ընտրության գաղափարի» մասին, որը կատարում է անփոփոխակային հիմնական իմաստույթի գործառնությունը, առանձնացնում է նաև «չիմացություն» իմաստույթը, որը գործառնական բնույթ ունի, ИЛИ-ն տեղեկություն է տալիս ոչ միայն այն մասին, որ երկու վարկածներից միայն մեկը տեղ ունի իրականության մեջ, այլև միաժամանակ այն մասին, որ խոսողը չգիտի, թե հատկապես որ մեկը²⁸:

²⁶ Sб'ս Н. С. Валгина, Синтаксис современного русского языка. М., 1978, с. 302:

²⁷ Այդ մասին տե՛ս նաև Չ. С. Пирс. Из работы «Элементы логики», «Семантика», М., 1983, P. Strawson, Introduction to Logical Theory. London, New York, 1952, p. 90:

²⁸ Sб'ս М. В. Ляпон, Единицы реляционной семантики..., с. 28—29:

Այլ բնույթի դեպքեր են ներկայացնում հետևյալ ասույթները. «Ես զբաղվում եմ լեզվաբանության, կամ լեզվի մասին գիտության», Տվյալ ասույթը կարելի է այլ կերպ շարադրել. «Ես զբաղվում եմ լեզվաբանությամբ և եթե այլ խոսքերով ասեմ՝ լեզվի մասին գիտությամբ»։ Ստացված արտահայտված ասույթը բովանդակում է պայմանական հարաբերություն արտահայտող ասույթ։ Առաջին հայացքից կարող է թվալ, որ ստացված բարդ պայմանական ասույթը («Եթե այլ խոսքերով ասեմ, ապա ես զբաղվում եմ լեզվի մասին գիտությամբ») փաղկացած է տարբեր մակարդակների՝ լեզվական (գլխավոր մասը) և անգրկելիական (ստորադասականը) երկու մասերից։ Սակայն դա սխալ տպավորություն է. սխալը վերանում է, երբ բարդ ստորադասական պայմանական նախադասությունը տեղավորվում է «Ես զբաղվում եմ լեզվաբանությամբ» բառակապակցությամբ սկսվող ողջ բարդ նախադասության համատեքստում։ Այդ դեպքում «լեզվի մասին գիտություն» բառակապակցությունը վերցվում է շակերտների մեջ, իսկ ասույթի այն մասը, որը բարդ պայմանական նախադասություն է, դիտվում է որպես մեկ (նույն) մակարդակի ասույթ։ Չի կարելի չհամաձայնել Մ. Վ. Լյապոնի հետ այն հարցում, որ կամ շաղկապի գործարանական իմաստույթը նման համատեքստերում «մեկնաբանվում է որպես «լիմացություն» իմաստույթից ազատ ընտրության գաղափար»²⁹։

Քա (իմ և այլն) տեղում բառակապակցությամբ ասույթները կարելի է փոխակերպել անիրական պայման արտահայտող ասույթների։ Օրինակ, «Քո տեղում ես կօգնեի նրան» → «Եթե ես քո տեղում լինեի, կօգնեի նրան»։ Նման ասույթներում խոսողի դիրքորոշումը (ներակա գործարանական իմաստը) կարող է մեկնաբանվել հետևյալ ձևով. այն կարող է արտահայտել՝ 1) տվյալ նաղադասույթի անհամապատասխանությունը իրականությանը, 2) իրականության իրական լինելու չիմացությունը և 3) խորհուրդ, մաղթանք։

Ուշադրության են արժանի միջանկյալ բառեր և կառուցվածքներ պարունակող ասույթները, որոնք կարելի է հանգեցնել երկմակարդակ պայմանական ասույթների՝ կազմված անդրտեքստային և տեքստային բաղկացուցիչներից։ Հնդհանրապես տեքստի կառուցման ու ճիշտ մեկնաբանման տեսակետից կարևոր ու հետաքրքիր երևույթ են միջանկյալ բառեր ու կառուցվածքները, որոնք գործառնություններ մտնում են եղանակավորող բառերին։ Սրանց ներկայությունը տեքստը դարձնում է բաղմաշերտ, առնվազն՝ իմաստային առումով երկշերտ, արտահայտելով հիմնական, փաստական տեղեկությունը և լրացուցիչ, գործարանական (այս բառի ամենալայն իմաստով) տեղեկությունը։ Այս փաստը նշվում է բազմաթիվ հետազոտողների կողմից։ Հմմտ. «Միջանկյալ-եղանակավորող բառերը ոչ միայն նախադասությանը կամ նրա մի մասին տալիս են եղանակավորող գնահատական, այլև կատարում են լրացուցիչ, կառուցվածքային դեր, հանդես գալով որպես նախադասության կառուցվածքային անհրաժեշտ տարր։ Փորձեք բաց թողնել միջանկյալ եղանակավորող բառերը... նախադասություններն անմիջապես կբայթայվեն, կկորցնեն իմաստը...»³⁰։

Լ. Մ. Նահապետովան³¹ միջանկյալ կառուցվածքները կապում է հատուկ երևույթի՝ տեքստի միջանկյալ հեռանկարի հետ, որը նման է այնպիսի ուշադրավ երևույթի, ինչպիսին է խոսողի գործարանական նպատակադրությունը։ Միջանկյալ կառուցվածքներ բովանդակող ասույթներում ես տարբերակում է տեղեկության երկու շերտ՝ հիմնական և ուղեկցող ասույթները, ինչը նպաստում է տեքստի առավել նույնական ընկալմանը։ Միջանկյալ կառուցվածքների տեքստակազմական գործառնությունը, հեղինակի կարծիքով, ոչ միայն ասույթի հատվածների կապակցման մեջ է, այլև նրանց միջև առկա բազմազան կապերի ու հարաբերությունների արտահայտման մեջ, ինչպիսիք են պատճառական-հետևանքային, երկընտրական, հեռանկարի, եզրակացությունների հարաբերությունները։ Խոսելով «հաղորդակցական գործառնության՝ երկու պրոնկցիաների մասին»՝ Ն. Ա. Սլյուսարևան պնդում է, որ դրանք, կիսելով նախադասությունը և տեքստի մեջ մտցնելով եղանակավորող տարրեր, հնարավորություն են տալիս բավական խրեյադարար ներկայացնել ինչպես հաղորդումը, այնպես էլ վերջինիս գնահատականը խոսողի կողմից³²։ Գ. Բ. Զանուկյանը միջանկյալ եղանակավորող բառերը դիտում է որպես խոսողի սուբյեկտիվ ընկալումն արտացոլող բառեր³³։

²⁹ Նույն տեղում, էջ 30։

³⁰ Л. В. Анисимова, Вводно-модальные слова в составе вопросительных предложений, «Русский язык в науке и учебной практике», Воронеж. 1981, с. 112.

³¹ SՆ՝ս Л. М. Нахалетова, Вводные конструкции современного английского языка. в аспекте теории текста: Автореф. дис..., канд. филол. наук, Тбилиси, 1986:

³² SՆ՝ս Н. А. Слюсарева, Проблемы функционального синтаксиса современного английского языка. М., 1981, с. 178—180:

³³ SՆ՝ս Գ. Բ. Զանուկյան, Փամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 361:

Ասվածի առնչությամբ կարելի է առանձնացնել հետևյալ իմաստները.

1) Ասույթի նկատմամբ խոսողի վերաբերմունքն արտահայտող նշանակությունը, որը պայմանավորում է քննարկվող առարկային տրվող օբյեկտիվ գնահատականը: Այդպիսի կատարողների նշանակությունն առավել մոտ է պայմանական ստորադասական նախադասության նշանակությանը: Օրինակ, «հՆարկե, և՛ այդ ամերիկացի Հարզմանը, և՛ սպասուհին որոշ տեղեկություններ ավելացրին մեր իմացածին: Կամ, եթե ավելի ճիշտ ասենք, նրանք այդ գործն ավելի խճճեցին» (Ա. Քրիստի, «Արևելյան ճակընթացը»):

2) Հաղորդածի իսկությունը կասկածի տակ առնելու նշանակություն. «Նրա ազգանունը վարդանյան է, եթե ես ճիշտ լսեցի»:

3) Այս կամ այն արտահայտությունն ընտրելու հիմնավորվածությունը. կասկածի տակ առնելու նշանակություն. «Տղան սիրահարվել էր, եթե այդպես կարելի էր անվանել նրա նոր զգացմունքը»:

Այն ասույթներում, որտեղ եթե-ապա-յով շաղկապված բաղադրիչների բայ-ստորոգյալների ապառախ ժամանակով են արտահայտված, իսկ գլխավոր նախադասության ենթական առաջին դեմքով է դրված, կարելի է վերհանել խոսողի մտադրության գործարանական ներակա իմաստը: Այսպես, «Եթե վաղը լավ եղանակ լինի, մենք կգնանք Սեան» ասույթով ոչ միայն պայմանահետևանքային հարաբերություն է արտահայտվում, այլև այն միտքը, որ խոսողը մտադրություն ունի, ծրագրել է ինչ-որ մի խմբով վաղը Սեան գնալ: Նման ասույթների ճշմարիտ/սխալ լինելու գնահատման և, որպես հետևանք, ասույթի բնույթի և շաղկապի գնահատման տեսանկյունից յուրահատուկ մոտեցում է առաջարկում Փ. Սթրուսը: Այսպես, վերլուծելով «Եթե անձրև գա, ապա կմնամ տանը» ասույթը, նա նշում է, որ նման ասույթով հաղորդվում է նախնական հայտարարություն մտադրության մասին, որը մտադրության մասին ոչ պայմանական հաղորդման պես պետք է անվանել ոչ ճշմարիտ և ոչ էլ սխալ ու պետք է այլ ձևով նկարագրել: Փ. Սթրուսը բացատրում է հետևյալ կերպ. եթե դիտարկվող ասույթն արտասանած մարդը դուրս է գալիս տնից, շնայած անձրևին, չի կարելի ասել, թե նրա ասածը սխալ է, այլ կարելի է եզրակացնել, որ նա խաբել է, որ իրականում նա չէր էլ պատրաստվում անձրևի դեպքում մնալ տանը, կամ՝ որ նա փոխել է իր որոշումը³⁴:

Հետաքրքիր են նաև այնպիսի պայմանական ասույթները, որոնցում կարելի է վերհանել ներակա նպատակի նշանակությունը: Որպես օրինակ կարող են ծառայել, մասնավորապես, թեոքստեր, հիպոթեզներ, քաբոմներ արտահայտող նախադասությունները: Օրինակ, «Եթե եռանկյան կողմերը համապատասխանաբար հավասար են մեկ այլ եռանկյան չորսերին, ապա այդ եռանկյունիները հավասար են» ասույթում փոխակերպման ճանապարհով կարելի է վերհանել հետևյալ խորքային իմաստը: «Որպեսզի երկու եռանկյունիները հավասար լինեն, անհրաժեշտ է, որ մեկ եռանկյունու երեք կողմերը համապատասխանաբար հավասար լինեն մյուս եռանկյունու երեք կողմերին»:

Վերլուծենք հետևյալ օրինակները.

1) «Եթե մտադիր ես բուժվել, ապա պետք է պլուզել ճիվաղալեց» = «Որպեսզի բուժվես, պետք է պառկես հիվանդանոց»:

2) «Եթե ուզենայիր ամուսնանալ նրա հետ, կմնայիր քաղաքում» = «Որպեսզի ամուսնանայիր նրա հետ, պետք է մնայիր քաղաքում»:

Բերված օրինակներում, ինչպես կարելի է տեսնել, երկրորդական մասերը պարունակում են ցանկություն, մտարություն արտահայտող բայեր, իսկ գլխավոր մասերը՝ անհրաժեշտության եզանկավորող ցուցիչ: Ներակա նպատակի իմաստից բացի արտահայտված է նաև խորհրդի, ցանկության (1) և կշտամբանքի, պարսավանքի (2) անուղղակի ներխոսողական գործառնություն:

Հետաքրքրական են նաև եթե-ապա շաղկապով այնպիսի երկրազագրիչ արտակա կատարողների, որոնք իմաստարանորեն նույնաբան են ներակա եռարազագրիչ պայմանական ասույթներին, ինչպիսին է, օրինակ, հետևյալ ասույթը. «Եթե քաղցած ես, ճաշը սառնարանում է»: Այստեղ պայմանական հարաբերություն է արտահայտվում ոչ թե արտակա բաղադրիչների միջև (այն փաստը, որ ճաշը սառնարանում է, հետևանքը չէ այն բանի, որ հասցեատերը քաղցած է), այլ, առաջին բաղադրիչի և ներակա, խոսքային ձև շունեցող այն օգակի միջև, որը հարկ է արտակայել, և ասույթը կատանա հետևյալ տեսքը. «Եթե քաղցած ես, ապա իմացիր, (նկատի ունեցիր, ես հաղորդում եմ քեզ և այլն), որ ճաշը սառնարանում է»: Արտակայված օգակը, ինչպես երևում է տվյալ օրինակից, արտահայտում է խոսողի գործարանական նպատակարարությունը, նրա հաղորդական մտադրությունը՝ կապված ներխոսողական գործառնության հետ: Հմտ. էությունը, ինչպես և ներակա «Եթե ուզում եք լողանալ, ապա լողարանը ձախ կողմում է» ասույթի S. Ա. Կոլոսովայի վերլուծությունը. «Թեև եթե...ապա-ն ստորադասական

³⁴ Տե՛ս P. Strawson, նշվ. աշխ., էջ 89:

իմաստային շաղկապ է, որը սովորաբար արտահայտում է պայմանական հարաբերություններ երկու երևույթների միջև, սակայն եթե A, ապա C կարգի կառուցվածքներում բաղադրիչների միջև անմիջական պայմանական կապ չի դիտվում: Անհեթեթ կհնչեր նաև տրամաբանական-քերականական շարահյուսության համար ավանդական գլխավորից դեպի երկրորդական մասն ուղղված հարցը. Ի՞նչ պայմանի դեպքում է լոգարանը գտնվում ձախ կողմում:—Եթե ուղում եք լողանալ, նման երկբաղադրիչ նախադասություններն իմաստային առումով ինքնավար են, սակայն դրանք ներակա են Նրանց ոչ-չրջվածության ազդանշանը ստորոգելական C միավորի շիրագործված հակադարձ (պասիվ) արժեքն է, որը գրավում է խնդրի շարահյուսական տեղը, ինչը սովորական է բացատրական իմաստ ունեցող բայերի դեպքում: Բնական է ենթադրել, որ բառային արտահայտություն շունեցող իմաստային օղակը պետք է արտահայտվի նման բայ բովանդակող ստորոգելական միավորի տեսքով: Հմմտ. Եթե ուղում եք լողանալ, ապա նկատի առեք (իմացեք, հաշվի առեք...), որ լոգարանը գտնվում է ձախ կողմում: Այսպիսով, պայմանական-հետևանքային հարաբերություններն առկա են ոչ թե A և C բաղադրիչների միջև, այլ մի կողմից A բաղադրիչի միջև, մյուս կողմից՝ (B, որ C) խմբի միջև. A→(B, որ C)»³⁵:

Դիտարկենք, վերջապես, հետևյալ դեպքերը. «Ասեք, որ լռի: Որովհետև հիմա կսպանեմ նրան» նախադասությունների զուգակցումը հարկ է մեկնարանել հետևյալ կերպ. «Ասեք, որ լռի: Ծն ասում եմ (նախազգուշացնում եմ) այդ մասին, քանի որ, եթե նա անմիջապես չլռի, ես հենց հիմա կսպանեմ նրան»: Ընտրից զայրանում ես: Դրանից կարելի է շուտ ծեղրանալ ներակայորեն բովանդակում է հետևյալ պայմանական նախազգուշացումը. «Պետք չէ անընդհատ զայրանալ, որովհետև եթե այդպես անես (անընդհատ զայրանաս), ապա շուտ կծեղրանաս»:

Վերջում նշենք, որ ներակա իմաստների վերհանումը ինքնանպատակ չէ, դա անհրաժեշտ ու շատ կարևոր քայլ է մտքի ողջ բազմազանության բացահայտման, պայմանական տեքստի համարժեք մեկնարանման ճանապարհին:

Л. Г. БРУТЯН — К анализу прагматических значений сложных высказываний (на материале условных высказываний). — Учитывая важность и необходимость выявления имплицитных смыслов для адекватного восприятия текста, в статье анализируются прагматические значения условных высказываний. Среди них дифференцируются значения, обусловленные а) модальностью и б) контекстом. В группе контекстуально-обусловленных значений выделяются и анализируются значения необходимости, совета, пожелания, упрека, предупреждения и другие.

³⁵ Т. А. Колосова, О сигналах неразвернутости некоторых имплицитных сложных предложений. «Синтаксис предложения», Калинин, 1983, с. 6.